## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«28» փետրվարի 2019 թվականի № 5**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի №2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ ավագանին որոշում է.
Հաստատել համայնքի 2019 թվականի փետրվարի 28-ի № 2 հերթական նիստի օրակարգը.
ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին
2. Համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի № 45-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին
3. 2018 թվականին հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաշվետվությունը հաստատելու մասին
4. «Ռեալ Թայմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, համայնքի ինտերնետ հասանելիության ապահովման նպատակով, լուսավորման հենասյուներով օպտիկամանրաթելային մալուխային ցանցի կառուցման և վարձակալական հիմունքներով օգտագործման թույլտվություն տալու մասին

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«28» փետրվարիի 2019 թվականի № 6

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Խաչփար համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ(6) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի

Խաչփար համայնքի ավագանու 2019 թվականի

փետրվարի 28 -ի № 6 որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

| ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2018թ. | | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ % |
|---|---|---|---|
| | ՊԼԱՆ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ՓԱՍՏԱՑԻ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | |
| Վարչական բյուջե | 46 078.5 | 48 967.0 | 106 |
| Հողի հարկ | 4 320.0 | 4 470.7 | 103 |
| Գույքահարկ | 4 661.0 | 6 831.6 | 146 |
| Տեղական տուրք՝ ընդամենը | 300.0 | 546.0 | 182 |
| Համայնքային հողերի օգտագործման վարձավճար | 416.8 | 422.4 | 101 |
| Տեղական վճարներ | 2 670.0 | 2 811.7 | 105 |
| Պետական բյուջեից տրվող դոտացիա | 31 941.7 | 31 941.7 | 100 |
| Այլ ոչ հարկային եկամուտներ | 1 769.0 | 1 905.6 | 108 |
| Ֆոնդային բյուջե | 19 560.8 | 19 598.1 | 100 |
| Եկամուտներ: Ընդամենը | 65 639.3 | 68 527.8 | 104 |

| ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | 2018թ. | | ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ % |
|---|---|---|---|
| | ՊԼԱՆ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | ՓԱՍՏԱՑԻ (ՀԱԶԱՐ ԴՐԱՄ) | |
| Վարչական բյուջե | 46 078.5 | 33 659.0 | 73 |
| Օրենսդիր և գործադիր մարմիններ Պետական կառավարում 01.1.1 | 21 101.0 | 18 245.4 | 86 |
| Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ 01.3.1 | 50.0 | - | - |
| Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 01.3.3 | 170.0 | 163.2 | 96 |
| Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 01.6.1 | 1 410.0 | 543.9 | 39 |
| Գյուղատնտեսություն 04.2.1 | 100.0 | - | - |
| Ոռոգում 04.2.4 | 2 765.0 | 1 897.2 | 67 |
| Աղբահանում 5.1.1 | 1600.0 | 1 376.0 | 86 |
| Փողոցային լուսավորում 06.4.1 | 300.0 | 299.6 | 100 |
| Գրադարան 8.2.1 | 1 330.0 | 1 088.7 | 82 |
| Այլ մշակութային կազմակերպութ.8.2.4 | 450.0 | - | - |
| Նախադպրոցական կրթություն 9.1.1 | 12 000.0 | 8 325.0 | 69 |
| Միջնակարգ ընդհանուր կրթություն 9.2.2 | 100.0 | 100.0 | 100 |
| Սոցիալական հատուկ արտոնություններ 10.7.1 | 2 300.0 | 1 620.0 | 70 |
| Պահուստայինֆոնդ 11.1.2 | 2 402.5 | - | - |
| Ֆոնդային բյուջե | 19 560.8 | 10 358.5 | 53 |
| Ընդամենը | 65 639.3 | 44 017.5 | 67 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝ 098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«28» փետրվարի 2019 թվականի № 7-Ն**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի № 45-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի «Համայնքի 2019 թվականի բյուջեի հաստատման մասին» № 45-Ն որոշման մեջ համայնքի ղեկավարի կողմից առաջարկված փոփոխությունները և լրացումը.

1) Որոշման 5-րդ կետի աղյուսակի «ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ», «ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ» և «ԳՈՒՄԱՐԸ» սյունակների «01.6.1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 11 060.2» թվերը և բառերը փոխարինել «04.3.2 Նավթամթերք և բնական գազ 5 800.0» բառերով և թվերով:

2) Որոշման 5-րդ կետի աղյուսակը լրացնել «04.5.1 Ճանապարհային տրանսպորտ 5 260.2» տողով:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«28» փետրվարի 2019 թվականի № 8**

## 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել 2018 թվականին հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի

Խաչփառ համայնքի ավագանու 2019 թվականի

փետրվարի 28 -ի № 8 որոշման

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրում 2018 թվականին ընդգրկված էր «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի կապիտալ վերանորոգման ծրագիրը, որի նախահաշվային արժեքը կազմել է 14 067. 99 հազր դրամ:

Համայնքի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է գնանշման հարցում: Համայնքի ղեկավարի կարգադրությամբ ձևավորվել է գնահատող հանձնաժողով: Հանձնաժողովի նիստում հաստատվել է գնումների հայտարարության և հրավերի տեքստերը, որոնք հրապարակվել են գնումների պաշտոնական տեղեկագրում: Հայտերի գնահատման արդյունքում ընտրված մասնակից է ճանաչվել «Նավիտաս» ՍՊԸ-ն, որի հետ էլ կնքվել է գնման պայմանագիրը:

2018 թվականի համայնքի բյուջեի ֆոնդային մասի 8 308.5 հազար դրամ գումարն ուղղվել է «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզի տանիքի կառուցման ու ներքին հարդարման աշխատանքներին և շենքային պայմանները համապատասխանեցվել են սահմանված չափանիշներին:

Համայնքի ղեկավարի կողմից իրականացվել է 2018 թվականին հնգամյա ծրագրով նախատեսված «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի կապիտալ վերանորոգման ծրագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
Էլ. փոստ՝khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» փետրվարի 2019 թվականի № 9

### «ՌԵԱԼ ԹԱՅՄ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐՈՎ ՕՊՏԻԿԱՄԱՆՐԱԹԵԼԱՅԻՆ ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ավագանին որոշում է.

«Ռեալ Թայմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը համայնքի ինտերնետ հասանելիության նպատակով տալ լուսավորման հենասյուներով օպտիկամանրաթելային մալուխային ցանցի կառուցման և տասը տարի ժամկետով, ամսական հինգ հազար դրամ վճարով, վարձակալական հիմունքներով օգտագործման թույլտվություն:

Կողմ(6) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ԼԵՎՈՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ